

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՄԵՌԵԱԼ ԾՈՎ**

Ծո՞վ, թէ անցեալի աղտաղտին ու աղ,
 Մեռած դարերու երերուն դագաղ,
 Որուն շուրջ լեռներ Մովաբի անցող
 Տառապանքն ունին, մեռնիլ չըկրցող:

Ու անոնք կարծես յաւերժութեան մէջ,
 Կը փորձեն հեգել խորհուրդը անէջ.
 Ծովակին արծաթ մեռելութեան ծոց
 Դիտելով դէմքերն իրենց բազմախոց:

Տառապած ցեղի մ'արտասուքն է ան,
 Մեռած փառքերու մոխիրը հալած.
 Տակաւին լեռներ իր ոտքին կու լան:

Թէեւ մահուան մէջ, բայց չի մեռնիր ան,
 Ծըծելով անյագ ուղիսն Յորդանանի,
 Անմեռ հաւատքի ջուրէն կենդանի:

ԵՂԻՎԱՐԴ

